**Հավելված N 5**
**ՀՀ կառավարության 2011 թվականի**
**մայիսի 5-ի N 665-Ն որոշման**

# Ց Ա Ն Կ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԵՐԿԱՐԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

1. Սույն ցանկով սահմանվում են քաղաքացիական ավիացիայի աշխատողներին «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնները:

2. Քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմերի անդամներ՝ անկախ օդանավի տեսակից՝

1) օդանավի հրամանատար.
2) օդանավի 2-րդ օդաչու.
3) օդանավի ղեկապետ.
4) օդանավի բորտինժեներ.
5) օդանավի բորտմեխանիկ.
6) օդանավի բորտռադիստ.
7) օդանավի բորտօպերատոր.
8) օդանավի թռչող ինժեներ.
9) օդանավի թռչող տեխնիկ.
10) բորտուղեկցորդ.
11) բոլոր անվանումների պարաշյուտիստներ, փրկարարներ:

3. օդային երթևեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողներ՝

1) կարգավար (դիսպետչեր).
2) ավագ կարգավար (ավագ դիսպետչեր).
3) կարգավար-հրահանգիչ (դիսպետչեր-հրահանգիչ).
4) թռիչքների ղեկավար:

4. Ինժեներատեխնիկական ծառայության աշխատողներ, ովքեր իրականացնում են օդանավերի տեխնիկական սպասարկումը՝

1) բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկներ շարժիչագործներ (մոտորիստներ).
2) բոլոր անվանումների մեխանիկներ.
3) բոլոր անվանումների ավիացիոն ինժեներներ.
4) օդային նավատորմի և թռչող այլ ապարատների տեխնիկական սպասարկման արտադրամասերի, հերթափոխերի, տեղամասերի, ծառայությունների, խմբերի պետեր:

***(4-րդ կետը լրաց. 20.10.16 N 1082-Ն)***
***(հավելվածը լրաց. 20.10.16 N 1082-Ն)***

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար — Դ. Սարգսյան